Համաձայնագրի նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Լեհաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ ‹‹Կողմեր››,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ խթանել Կողմերի միջև հարաբերությունները տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտներում,

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ, որ տեղեկատվական տեխնոլոգիաները և կապը կարևոր գործոն են յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական զարգացման համար,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտներում առավել ակտիվ երկկողմ հարաբերությունների առկա ներուժը,

համաձայնեցին հետևյալի մասին՝

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակն է տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտներում հաստատել միջկառավարական համագործակցություն՝ խթանելու Կողմերի ջանքերն՝ ուղղված փորձի և լավ գործելակերպի փոխանակմանը:

Հոդված 2

2.1. Կողմերը սույն Համաձայնագրի ներքո կարող են նախաձեռնել առավել սերտ համագործակցություն որոշակի հարցերի շուրջ:

2.2. Կողմերը կառաջարկեն տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտների համապատասխան մարմինների միջև ուղղակի համագործակցություն և կաջակցեն դրանց:

Հոդված 3

Տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտներում Կողմերի միջև հարաբերությունները կիրականացվեն իրենց ներպետական օրենսդրության, Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ), Համաշխարհային փոստային միության (ՀՓՄ) հանձնարարականների և ակտերի ու սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

Հոդված 4

4.1. Կողմերը կհամագործակցեն հետևյալ ոլորտներում, չսահմանափակվելով դրանցով Կողմերի միջև փոխադարձ համաձայնության դեպքում.

- լայնաշերտ հասանելիություն,

- էլեկտրոնային կապի և փոստային ծառայությունների մասին օրենսդրություն,

- հայկական և լեհական կազմակերպությունների համատեղ մասնակցություն Եվրոպական միության ծրագրերին և նախաձեռնություններին,

- Կողմերի միջև գործարար կապերի խրախուսում և հայկական ու լեհական ընկերություններին աջակցում,

- համապատասխան մասնագիտացված միջազգային կազմակերպությունների համաժողովներին և ֆորումներին մասնակցության հետ կապված իրենց դիրքորոշումների նախապատրաստում և/կամ փոխադարձ աջակցության ցուցաբերում:

- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման խթանում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տնտեսության թվայնացման, տվյալների կառավարման, կիբեռ անվտանգության և

ընդհանուր ենթակառուցվածքային առաջընթացների վրա:

- Հանրային-մասնավոր համագործակցության խթանում. համատեղ տեխնոլոգիական հմտությունների զարգացման նախագծեր, համատեղ ձեռնարկություններ, հետազոտական և զարգացման լաբարատորիաների ստեղծում, երկու երկրներում գլոբալ մարտահրավերների և կարիքների վրա հիմնված տեխնոլոգիական առաջընթացի հզորացման համար փորձի փոխանակման համագործակցություն:

4.2. Կողմերը համագործակություն կիրականացնեն հետևյալ միջոցներով՝

- տեղեկատվության և փաստաթղթերի փոխանակում,

- երկկողմ խորհրդատվությունների անցկացում,

- փորձագետների և համատեղ աշխատանքային խմբերի առաքելությունների կազմակերպում,

- փոխադարձաբար համաձայնեցված՝ համագործակցության այլ համապատասխան ձևերով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի դրույթների կատարման առնչությամբ նամակագրության համար Կողմերը կկիրառեն անգլերենը: Այլ կազմակերպությունների և մարմինների միջև նամակագրության լեզուն կորոշվի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 6

Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է երրորդ կողմերին չհայտնել սույն Համաձայնագրի ներքո ձեռք բերված տեղեկատվությունն՝ առանց մյուս Կողմի նախնական համաձայնության:

Հոդված 7

7.1. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրարկման ընթացքում ծագած ցանկացած վեճ կլուծվի Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

7.2. Սույն Համաձայնագրի դրույթները չպետք է խոչընդոտեն Կողմերի՝ այլ միջազգային համաձայնագրերից բխող իրավունքների և պարտավորությունների կատարմանը:

Հոդված 8

8.1. Սույն Համաձայնագրի կիրառման համար պատասխանատու իրավասու մարմիններն են.

- Հայաստանի Հանրապետությունում՝ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը,

- Լեհաստանի Հանրապետությունում՝ Ձեռնարկատիրության և տեխնոլոգիաների նախարարություն:

8.2. Կողմերը միմյանց ժամանակին կծանուցեն սույն Համաձայնագրի ներքո իրավասու մարմիններին վերաբերող ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 9

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և ընդհանուր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ: Նման լրացումները և/կամ փոփոխություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 10.1 կետի համաձայն:

Հոդված 10

10.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին ծանուցումն ստանալու օրվանից, որով Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց կտեղեկացնեն իրենց ներպետական իրավական ընթացակարգերի կատարման մասին, և

կգործի հինգ (5) տարի ժամկետով՝ ինքնաբերաբար երկարաձգվելով յուրաքանչյուր անգամ հնգական (5-ական) տարի նոր ժամանակահատվածներով:

10.2. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցելու միջոցով: Այդ դեպքում Համաձայնագրի գործողության դադարեցումն ուժի մեջ կմտնի մյուս Կողմին նախնական գրավոր ծանուցում ուղարկելուց երեք (3) ամիս հետո:

10.3. Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չպետք է ազդի համագործակցության այն միջոցառումների վրա, որոնք արդեն ընթացքի մեջ են:

Կատարված է Երևան քաղաքում, 2018թ. փետրվարի 12-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լեհերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ **Լեհաստանի Հան**